ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի հուլիսի 19-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՃԴ-ԲՄԽԾՁԲ-2023/02**

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր–Ծրագիր 4, Սիսիան-Քաջարան հատվածի կառուցման նպատակով տարաբնակեցման ծրագրի իրականացման խորհրդատվական ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՃԴ-ԲՄԽԾՁԲ-2023/02** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 17-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 19-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1՝ Որո՞նք են կազմակերպված ընթացակարգի և հրավերի կազմման իրավական հիմքերը, եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ բաժնով նախատեսված են խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման առանձնահատկությունները: Ընդ որում, խորհրդատվական ծառայությունների գնումը նախատեսվում է կազմակերպել Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով:

Պարզաբանում N 1՝ ՃԴ-ԲՄԽԾՁԲ-2023/02 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 68-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Հարցադրում N 2՝ Ինչու՞ նախատեսված խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի համար չի կիրառվում Օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված խորհրդատուի ընտրության (գնահատման) մեխանիզմը:

Պարզաբանում N 2՝ Խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի համար կիրառվել է Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-՝-րդ կետով սահմանված ոչ գնային նվազագույն պայմաններին համապատասխանող գնահատված և ամենացածր գին առաջարկած խորհրդատուի ընտրության մեթոդը:

Հարցադրում N 3՝ Հրավերի պայմանագրի նախագծով ծառայությունների մատուցման ժամկետը նախատեսված է պայմանագիրը կնքելուց հետո 26 ամսվա ընթացքում: Ընդ որում ծառայությունների մատուցման գինը 2023 թվականի համար կազմում է 13,680,000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ տարիների (2024 և 2025) համար ֆինանսական միջոցների չափը նշված չէ, ինչը էական պայման է համարվում մրցույթի մասնակցության դեպքում գնային առաջարկի ձևավորման համար: Հրավերում 2023 թվականին հաջորդող տարիների համար ֆինանսական միջոցների վերաբերյալ նշագրման բացակայությունն արդյո՞ք ենթադրում է, որ գնման ընթացակարգը կազմակերպվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով: Եթե

այո ապա Հրավերում բացակայում է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների համար ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները: Որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վերաբերյալ տեղեկատվության բացակայության պարագայում առաջանում են հարցեր, որոնք էական ազդեցություն ունեն գնային առաջարկի ձևավորման, հետևաբար նաև մրցույթի մասնակցության մարտավարության վրա: Այսպես, արդյո՞ք 2023 թվականի մատուցման ենթակա ծառայությունների համար կիրառելի են Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը և 9-րդ ենթակետի, իսկ հետագա տարիների համար՝ Կարգի 32-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները: Մասնավորապես՝ հաշվի առնելով, որ բոլոր ապահովումների համար կիրառելի են գնման գնի նկատմամբ հաշվարկները՝ խնդրում ենք հստակ ներկայացնել, որոնք են կազմում 1) հայտի ապահովման, 2) պայմանագրի կատարման և 3) որակավորման ապահովուների չափերը 2023; 2024 և 2025 թվականների յուրաքանչյուր տարվա համար առանձին:

Պարզաբանում N 3՝ Գնման ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով չէ կազմակերպված: Ընթացակարգի համար ֆինանսական միջոցներ նախատեսված են: 2024 և 2025 թվականների ընթացքում իրականացվելու են տվյալ ժամանակահատվածում Հավելված 1.1-ով սահմանված մատուցվելիք ծառայությունները՝ նշված ծավալների համամասնությամբ: Հայտի, որակավորման և պայմանագրի ապահովումների չափերը սահմանված են Հրավերով՝ համապատասխանաբար գնման գնի 5 տոկոսի, 30 տոկոսի և 10 տոկոսի չափով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՃԴ-ԲՄԽԾՁԲ-2023/02** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Հեղինե Բաբաջանյանին:

Հեռախոս՝ 010 54 21 76

Էլ. Փոստ՝ *procurement@armroad.am*

Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

ОБЪЯВЛЕНИЕ

о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№ 2 от 19 июля 2023 года
и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры **CHD-BMKHTsDzB-2023/02**

Оценочная комиссия процедуры закупки под кодом **CHD-BMKHTsDzB-2023/02,** организованной с целью приобретения **консультационных услуги по реализации плана переселения для строительства участка Сисиан-Каджаран, Инвестиционная программа дорожного коридора Север-Юг - Проект 4,** для своих нужд, ниже представляет запросы, полученные 17.07.2023г. и предоставленные 19.07.2023г. по ним разъяснения относительно приглашения по тому же коду:

Запрос № 1 Правовые обоснования выбора процесса закупки.

Разъяснение № 1 Процедура закупки была организована согласно требованиям 43-ей статьи закона РА «О закупках» и 5-ого подпункта 68-ого пункта Приложения 1 Решения правительства РА Об организации процесса закупки номер 526-Н от 04.05.2017:

Запрос № 2 Почему для приобретения услуг не применяются механизмы выбора (оценки) 44-ой статьи Закона РА «О закупках».

Разъяснение № 2 Для приобретения консультационных услуг был применен 2-ой пункт 1-ой части 44-ой статьи Закона.

Запрос № 3 Организованна ли процедура закупки на основании 2-ого пункта 6-ой части 15-ой статьи Закона. Размеры Обеспечений заявки, договора и квалификации. Размер суммы оплаты за 2024-2025 годы

Разъяснение № 3 Процедура закупки не организована на основании 2-ого пункта 6-ой части 15-ой статьи Закона. Для приобретения услуг предусмотрены финансовые средства. Для 2024-2025гг. оплата будет производиться пропорционально согласно объёмам представленым в приложение 1.1. Размеры обеспечений заявки, договора и квалификации установлены Приглашением, соответственно 5, 10 и 30 процентов от цены закупки.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии под кодом **CHD-BMKHTsDzB-2023/02** Эгине Бабаджанян

Телефон **010 54 21 76**

Электронная почта: procurement@armroad.am

Заказчик: **Фонд «Дорожный департамент»**

В случае каких-либо расхождений между русской и армянской версиями официальная армянская версия будет иметь приоритетное значение